# ՀՀ Ոստիկանության ոլորտում իրականացվող քաղաքականության վերլուծություն

2001 թ. ապրիլի 16-ին ընդունվեց «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը, որը դարձավ այն առանցքը, որի շուրջ ձևավորվեց ոստիկանական օրենսդրությունը: Տվյալ օրենքի ընդունումից հետո ոստիկանության գործունեությունը կանոնակարգող իրավական դաշտը համալրվեց նաև «Ոստիկանությունում ծառայության մասին», «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին», «ՀՀ քաղաքացիության մասին», «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին», «Զենքի մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքներով, որոնք ՀՀ քրեական օրենսգրքի և ենթաօրենսդրական այլ նորմատիվ-իրավական ակտերի հետ միասին կազմեցին ՀՀ Ոստիկանության ոլորտի քաղաքականության հիմքը:

2018 թվականի «Թավշյա հեղափոխությունից» հետո Հայաստանի իրավապահ մարմիններում զգալի փոփոխություններ սկսվեցին: Հայտարարվեց ոստիկանությունում խորը բարեփոխումներ իրականացնելու մտադրություն՝ քաղաքացիական հասարակության համար այն ավելի թափանցիկ և հաշվետու դարձնելու նպատակով: Այդ բարեփոխումները ներառում էին ոստիկանության կառուցվածքի արդիականացում, ծառայության պայմանների բարելավում, սպաների վերապատրաստում, միջազգային չափանիշներին համապատասխանության ապահովում և այլն: Ներկայումս ՀՀ Ոստիկանությունը շարունակում է գտնվել բարեփոխումների ինտենսիվ փուլում՝ մասնագիտացված ծառայության բարելավման և ոստիկանության նկատմամբ հանրային բարձր վստահության ձևավորման առումով: ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի խոսքերով՝ «Ոստիկանության բարեփոխումների հիմնական նպատակը պետք է լինի ոստիկանություն-քաղաքացի նոր հարաբերությունների հաստատումը»: Այդ նպատակով մշակվեց «Հայաստանի Հանրապետության Ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թվականների ռազմավարությունը և դրա գործողությունների ծրագիրը», որը նպատակ ուներ

վերափոխել Հայաստանի ոստիկանությունը ավելի ժամանակակից և արդյունավետ կառույցի, լուծել մի շարք համակարգային խնդիրներ, ինչպիսիք են կոռուպցիան և չարաշահումները ոստիկանական ուժերում՝ միաժամանակ դարձնելով իրավապահ մարմիններն ավելի թափանցիկ և հաշվետու: 2020-2022թթ. ռազմավարության մեջ հիմնական ուշադրությունը կենտրոնացված էր ոստիկանության կառուցվածքային բարեփոխումների, պարեկային ծառայության ստեղծման, կոռուպցիայի դեմ պայքարի, տեխնիկական սարքավորումների բարելավման և կադրերի պատրաստման վրա: Ռազմավարությունը կենտրոնացած էր նաև ոստիկանության վերապատրաստման բարելավման, տեխնիկական սարքավորումների արդիականացման և հանրային խորհրդակցությունների ու միջազգային համագործակցության ընդլայնման վրա:

Վերջին տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում զգալի բարեփոխումներ են իրականացվել ոստիկանության ոլորտի քաղաքականության մեջ, որոնք ուղղված են դրա կառուցվածքի բարելավմանը, աշխատակիցների որակավորման բարձրացմանը, նյութատեխնիկական բազայի թարմացմանը և այլն: Թվարկված փոփոխություններն ուղղված են ոստիկանության՝ հասարակության ժամանակակից մարտահրավերներին և կարիքներին հարմարեցմանը: Ինչպես նշված է Եվրոպայի խորհրդի 2023-2026 թվականների Հայաստանի գործողությունների ծրագրում, որն աջակցում է տարբեր համակարգային փոփոխություններին և բարեկարգումներին տարբեր նախաձեռնությունների և ֆինանսավորման ծրագրերի միջոցով, իրականացվող բարեփոխումները վկայում են Հայաստանի՝ պետական ինստիտուտները եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու հստակ մտադրության մասին,:

ՀՀ ոստիկանության ոլորտում քաղաքականության կարևոր մասն է կազմում 2021 թվականին սկսված ոստիկանության բարեփոխումների ռազմավարության իրականացումը: Այս փուլում հիմնական շեշտը դրվել է բարեփոխումների համար կառուցվածքային շրջանակի ստեղծման վրա, այդ թվում՝ նոր պարեկային ծառայության ստեղծումը և ոստիկանությունը ներքին գործերի նախարարության վերափոխման գործընթացի սկիզբը: 2021թ.-ին ոստիկանության ոլորտում իրականացված բարեփոխխումներում զգալի տեղ է հատկացվել նաև ոստիկանության աշխատակիցների վերապատրաստմանը, ոստիկանության

ծառայողների վերապատրաստման ծրագրերի կատարելագործմանը, ինչպես նաև տեխնիկական հագեցվածության բարելավմանը:

2022 թվականին ոստիկանության բարեփոխումների աշխատանքները շարունակվեցին՝ կենտրոնանալով իրավապահ մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարի ուժեղացման և ոստիկանության ծառայողների պրոֆեսիոնալիզմի մակարդակի հետագա բարելավման վրա: Աշխատանքներ սկսվեցին ապագա ՆԳՆ կառույցներում տարբեր ծառայությունների, օրինակ՝ միգրացիոն ծառայության ինտեգրման ուղղությամբ, որը պետք է բարձրացներ պետական կառավարման արդյունավետությունը: 2022 թվականին նկատելի էր նաև միջազգային համագործակցության նշանակալի աճ(մասնավորապես Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի հետ)՝ Հայաստանի ոստիկանությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: Սկիզբ դրվեց նոր տեխնոլոգիաների ներդրումանը, ինչպիսիք են CCTV համակարգերը և բարելավված տվյալների բազաները, ինչը նույնպես խթանում է ոստիկանության ոլորտի բարեփոխումներին:

2023 թվականին ավարտվեցին 2024-2026 թվականների ոստիկանության բարեփոխումների նոր ռազմավարության իրականացման նախապատրաստական աշխատանքները: Այս փուլում ուշադրության կենտրոնում էին կարգավորող դաշտի բարելավումը և էական կառուցվածքային փոփոխությունների նախապատրաստումը: Պետք է շեշտել նաև, որ նոր ռազմավարությունը մշակելիս հաշվի են առնվել նախորդ տարիների բացթողումները, հանրային քննադատությունն ու փորձագիտական գնահատականները, ինչի արդյունքում ծրագրում կատարվել են մի շարք ճշգրտումներ:

Խոսելով ոստիկանության ոլորտում ՀՀ քաղաքականության մասին՝ հարկ է անդրադառնալ նաև միջազգային համագործակցությանը. մասնավորապես այն հանգամանքին, որ Եվրոպայի խորհուրդը ընդունել է Հայաստանի համար 2023-2026 թվականների Գործողությունների ծրագիր, որն աջակցում է ոստիկանության բարեփոխումներին: Այս համագործակցության շրջանակում միջազգային փորձագետները բարձր են գնահատում իրավապահ մարմինները եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու Հայաստանի ջանքերը: Բազմիցս ընդգծվել է մարդու իրավունքների պրակտիկայի բարելավման և ոստիկանության նկատմամբ

հանրային վստահության մակարդակի բարձրացմանն ուղղված բարեփոխումների կարևորությունը: Թրանսփարենսի Ինթերնեշնլ-ի զեկույցում մատնանշվում են դրական փոփոխություններ Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի գործում, այդ թվում՝ ոստիկանության համակարգում:

Ընդհանուր առմամբ, 2021-2023թթ. ընթացքում ՀՀ Ոստիկանության ոլորտում իրականացված քաղաքականության արդյունքում նկատելի հաջողություններ են գրանցվել. մասնավորապես՝ ոստիկանությունում կոռուպցիոն հանցագործությունների թվի կրճատման, ինչպես նաև մի շարք հանցագործությունների բացահայտման գործում իրավապահ մարմինների արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Սակայն պետք է նշել նաև, որ չնայած մի շարք դրական տեղաշարժերի, դժվար է միանշանակ պնդել ՀՀ Ոստիկանության ոլորտում քաղաքականության բարձր արդյունավետության մասին: Վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանի ոստիկանության քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է ոչ միանշանակ. 2021 թվականին հանցագործությունների մակարդակն աճել է 14,3%-ով համեմատված նախորդ տարվա, ինչը պայմանավորված է գողությունների, ճանապարհատրանսպորտային իրավախախտումների և խարդախությունների դեպքերի աճով: 2022 թվականին գրանցվել է ավելի քան 37.000 հանցագործություն, ինչը 19,3 տոկոսով ավելի է 2021 թվականի համեմատ: Հանցավորությունը շարունակել է աճել 2023 թվականին՝ աճելով 8,1%-ով, չնայած բարեփոխումներին և ոստիկանական կոռուպցիայի դեմ պայքարի ջանքերին: Նման իրավիճակը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններով. բարեփոխումների իրականացումն ընթանում է բավականին դանդաղ տեմպերով լինել համակարգի ներսում դիմադրության կամ սահմանափակ ռեսուրսների պատճառով: Սահմանափակ ֆինանսական միջոցները ևս էապես դժվարացնում են ծրագրված բոլոր միջոցառումների իրականացումը, ներառյալ տեխնիկական բազայի արդիականացումը և աշխատողների որակավորման, պրոֆեսիոնալիզմի և աշխատավարձերի բարձրացումը:

Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, Հայաստանի ոստիկանության քաղաքականությունը վերջին երեք տարիների ընթացքում կարելի է բնութագրել բարեփոխումների աստիճանական, բայց հետևողական իրականացմամբ, որոնք

ուղղված են իրավապահ մարմինների արդիականացմանը, դրանց թափանցիկության և արդյունավետության բարձրացմանը և կառույցը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն:

Հայաստանի ոստիկանության բարեփոխումների նոր ռազմավարությունը, որն ընդգրկում է 2024-2026 թվականները, հիմնված է նախորդ բարեփոխումների հիմքերի վրա, սակայն նախատեսում է ավելի համապարփակ փոփոխություններ մտցնել իրավապահ համակարգի արդիականացման ուղղությամբ: Որպես ռազմավարության կարևոր մաս պետք է առանձնացնել ներքին գործերի նախարարության ստեղծումը, որը կկենտրոնացնի ոստիկանության ուժերը և միգրացիոն ծառայությունները՝ կառավարության արդյունավետությունն ու վերահսկողությունը բարելավելու համար: Ի տարբերություն նախորդ 2020-2022թթ. ռազմավարությանը՝ 2024-2026թթ. ռազմավարությունն առավել կենտրոնացած է եվրոպական չափանիշներին ավելի խորը ինտեգրման և միջազգային համագործակցության վրա: Նոր ռազմավարության մեջ նաև հաշվի է առնվում նախորդ բարեփոխումների հանրային քննադատությունը, շեշտը դրվում է քաղաքացիական հասարակության հետ երկխոսության բարելավման և վստահության բարձրացման վրա: Ռազմավարության վիճահարույց տարրերից մեկը ֆինանսական հանցագործությունների հետաքննության համապատասխան վերահսկողության և կառուցվածքի վերաբերյալ բանավեճն է՝ ներքին գործերի նախարարության ենթակայության տակ գտնվող վերահսկողական գործառույթների տեղափոխման հնարավոր անարդյունավետության վերաբերյալ մտահոգություններով: Ռազմավարությունում առաջարկվող որոշ միջոցներ, ինչպես օրինակ ոստիկանության կողմից անկախ գաղտնալսումը, արժանացել են քաղաքացիական հասարակության քննադատությանը:

Այսպիսով, ոստիկանության քաղաքականությունը Հայաստանում վերջին երեք տարիների ընթացքում բնութագրվում է բարեփոխումների աստիճանական և համակարգված գործընթացով՝ ուղղված իրավապահ մարմինների արդիականացմանն ու արդյունավետության բարձրացմանը: Իրականացված բարեփոխումների արդյունքում Հայաստանի ոստիկանությունը էապես բարեփոխվել է. քայլեր են ձեռնարկվել արդիականացման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ, դրական արդյունքներ են գրանցվել հատկապես հակակոռուպցիոն ոլորտում: Բացի այդ՝ զգալի աշխատանքներ են տարվում ոստիկանության

ուսուցման և վերապատրաստման կատարելագործման ուղղությամբ, ինչը նպաստում է ոստիկանության գործունեության արդյունավետության բարձրացմանը: Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած խոշոր վերափոխման ժամանակ, այս դեպքում ևս կան մի շարք բացթողումներ և բացասական կողմեր: Ոլորտի հետագա կարևորման հարցում խիստ կարևոր է շարունակել մշտադիտարկում և վերլուծել իրականացված փոփոխությունները՝ ընթացիկ պրակտիկան օպտիմալացնելու և հայտնաբերված թերությունները վերացնելու համար, ինչը նաև կապահովի քաղաքացիների ավելի մեծ վստահությունը և գոհունակությունը տվյալ կառույցի գործունեության նկատմամբ: